Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 15-ի N 1302 - Ա որոշման

ԱՏԳ ՏԱՐԱԾՔԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Ազատ տնտեսական գոտուն ներկայացվող պահանջների շրջանակը ներառում է՝

1) տարածքի անվտանգության, առաջնային բուժօգնության և հակահրդեհային համակարգերով ապահովվածությունը.

2) անխափան ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման, աղբահանության և կապի միջոցների (առնվազն հեռախոսային կապի և ինտերնետի) ապահովվածությունը.

3) ջրամբարի թասի (ջրի հայելու), որպես ջրային ֆոնդի տարածքի անձեռնմխելիությանը՝ ափեզրի ամբողջ երկայնքով՝ սահմանափակված 1837.5 մ (Բ. Ծ. Մ.) նիշով և դրան զուգահեռ 100 մ լայնությամբ ձգվող հողաշերտով պահպանումը.

4) ԱՏԳ-ի տարածքից ջրամբարի անօտարելի գոտու և ջրամբարի թասի տարածքի, ջրային ռեսուրսների աղբոտման ու աղտոտման բացառումը.

5) Ապարանի ջրամբարի կատարից սկսվող և ջրամբարի թասի ձախ ափով ձգվող (մինչև թասի վերջնամասը) գրունտային ավտոճանապարհի՝ որպես ԱՏԳ տարածք տանող ճանապարհ չդիտարկվելը և չներառվելը ծրագրում կամ դրա օժանդակման - աջակցման բաղադրիչում, քանի որ պատվարը հողալիցքային է՝ ավազակավային միջուկով և նախատեսված չէ նման տրանսպորտային հոսքերի անցկացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ